Այս հիմնախնդրի լուծումը համարվում է պետության տնտեսական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Բացի պետական աջակցությունից, ազգային ծրագրի կատարումը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի ֆինանսական կառույցները հնարավորինս թափանցեն սահմանային, նախալեռնային ու լեռնային շրջաններ, ինչը էապես կնպաստի գյուղատնտեսական արտադրության և գյուղական վայրերում փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:

ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

ՀՀ-ում 1991-1992թթ. սկսված բարեփոխումները արմատապես փոխեցին երկրի ողջ հասարակական-սոցիալական կերպարը: Գերխնդիր դրվեց սոցիալիստական արտադրահարաբերությունների ապամոնտաժման և մասնավոր սեփականության հենքի վրա ձևավորել ազատ շուկայական տնտեսություն:

Ներկայումս ՀՀ-ում գյուղատնտեսության կազմակերպական հիմնական ձևը գյուղացիական տնտեսություններն են, որոնք տալիս են գյուղատնտեսության համախառն արտադրանքի մինչև 90-93%-ը: Մնացած մասը տալիս են դեռևս պետական կարգավիճակը պահպանած գիտական, ուսումնական, տնկարանային և այլ հատուկ նշանակության, ինչպես նաև խոշոր մասնատիրական, մի քանի կոոպերատիվ տնտեսությունները, վկայելով հողի սեփականության բազմաձևության առկայությունը:

Գյուղացիական տնտեսություններից յուրաքանչյուրը, որոնց թիվը ՀՀ-ում ներկայումս հասնում է շուրջ 340 հազարի, միջին հաշվով տիրապետում է 1.40հա օգտագործելի հողահանդակների, որից 1.0հա վարելահող և 0.2-ական հեկտար տնկարկներ ու խոտհարքեր: Այս ցուցանիշները զգալիորեն տատանվում են ոչ միայն ըստ մարզերի, այլև հաճախ հարևան համայնքների:

Գյուղացիական տնտեսությունը Հայաստանում, համենայն դեպս, ներկա սերնդի համար որպես հասարակական արտադրության կազմակերպական ձև նորություն է: Այդպիսի տնտեսություն վարելու պատրաստ չէին, առաջին հերթին իրենք՝ գյուղացիական տնտեսություն վարողները, պատրաստ չէին արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքները, պատրաստ չէր կառավարման համակարգը և, որ ամենակարևորն է, պատրաստ չէր ագրարային շուկան: Այնուհանդերձ, գյուղացիական տնտեսությունների կազմավորումը ընթացավ սրընթաց ու հապճեպ; հիմնականում 1891թ. փետրվար - ապրիլ ամիսներին՝ գարնանացանը բաց չթողնելու ակնկալիքով:

Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ գյուղատնտեսությունը Հայաստանում հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Արագորեն պակասեցին ցանքատարածությունները, այգետարածություններն ու անասունների գլխաքանակը, ընթացան կառուցվածքային բացասական գործընթացներ,

կտրուկ կրճատվեց արտադրանքի ծավալը: Այս իրավիճակը տևեց մինչև 1996-1998թթ.: Այնուհետև ընթացավ կայունացման մի ժամանակաշրջան՝ մինչև 2000-2002թթ., ապա նշմարվեցին առաջընթացի ու զարգացման որոշ դրսևորումներ:

Չնայած վերջին ժամանակներս նկատված արտադրական ու տնտեսական որոշ դրական շարժընթացներին, գյուղացիական տնտեսությունը, որպես տնտեսական, սոցիալական ու կազմակերպական միավոր, դեռևս մնում է չուսումնասիրված և չբացահայտված: Ներկայումս գյուղացիական տնտեսությունը չի ներկայացնում որևէ պաշտոնական տեղեկատվություն:

Մինչդեռ, չունենալով գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վերաբերյալ ելակետային ստույգ տվյալներ, դժվար, գուցե և անհնար է պետությունում վարել հիմնավորված ագրարային քաղաքականություն: Ընդ որում, ելնելով հանրապետության խայտաբղետ բնատնտեսական պայմաններից, այդ քաղաքականությունը պետք է լինի տարբերակված, հասցեագրված:

Ելնելով ահա այս իրավիճակից, մենք մեր առջև խնդիր դրեցինք՝ առաջին անգամ հանրապետությունում, փորձել հաշվարկել գյուղացիական տնտեսությունների արտադրության արդյունավետությունը՝ արտադրական ինքնարժեքի հաշվարկման և իրացման գների ուսումնասիրման հենքի վրա:

Հաշվի առնելով խնդրի բարդությունը ու փորձի բացակայությունը, որոշվեց ուսումնասիրություններ կատարել բուսաբուծական հիմնական ապրանքային արտադրատեսակների հիման վրա, հանրապետության երկու տարբեր մարզերի օրինակով:

Որպես ուսումնասիրության օբյեկտներ ընտրվել են ՀՀ Արագածոտնի և Լոռու մարզերը:

Արագածոտնի մարզը հանրապետությունում առանձնանում է բնական պայմանների արտակարգ խայտաբղետությամբ ու բազմագոտիությամբ, ինչը կանխորոշում է գյուղատնտեսության ճյուղերի զարգացման ու զուգակցման տարբեր պայմաններ, որոնք տիպիկ են Հայաստանի տարածքի մեծամասնության համար, և այս մարզի տարբեր գոտիների օրինակով մշակած լուծումները կարելի է երաշխավորել հանրապետության մյուս մարզերին:

Լոռու մարզը զբաղեցնում է Հայաստանի հյուսիսային մասի կենտրոնական հատվածը, ուր տեղաբաշխված է Լոռվա սարահարթը: Մարզը զբաղեցնում է 3769 քառ.կմ տարածք, ինչը կազմում է հանրապետության տարածքի մոտ 13%-ը: Մարզը հանրապետությունում ավանդաբար հայտնի է որպես տոհմային տավարաբուծության կենտրոն, իսկ բուսաբուծության ճյուղերից զարգացած են կարտոֆիլագործությունը և հացահատիկի արտադրությունը: Գուգարքի և հատկապես, Սպիտակի տարածաշրջաններում զարգացած է նաև կաղամբի արտադրությունը: Մարզի հյուսիս - արևելյան մասում, որն աստիճանաբար իջնում է դեպի Դեբեդ գետի հովիտը, զարգացած է նաև այգեգործությունը և հարավային բանջարաբուծությունը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գյուղացիական տնտեսություններում արտադրական գործողությունների ժամկետների, ծավալների ու ծախսումների, ինչպես նաև արտադրանքի ծավալների, ստացման ժամկետների, իրացման ու եկամուտների վերաբերյալ որևէ պաշտոնական հաշվառում կամ գոնե գրանցում չի կատարվում: Գյուղատնտեսական վիճակագրությունը սկսվում է գյուղապետարաններում, որոնք էլ իրենց հաշվետվությունները կազմում են սեփական գնահատումների հիման վրա, քանի որ ստույգ հաշվառման համար նրանք զուրկ են և՛ տեխնիկական, և՛ թե հաստիքային ու նյութական հնարավորություններից:

Հաշվի առնելով ընտրված մարզերի բուսաբուծության մասնագիտացումը, ուսումնասիրության համար ընտրվել են հետևյալ մշակաբույսերը.

- Արագածոտնի մարզից՝ բանջարեղեն, պտուղ և խաղող,
- Լոռու մարզից՝ աշնանացան ցորեն, կարտոֆիլ և բազմամյա խոտ:

Ընտրված ճյուղերը տալիս են տվյալ մարզի բուսաբուծության արտադրանքի 80%-ից ավելին:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ տալիս է երկու գներ՝ մանրածախ (շուկայական) և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղմթերքների գները[1]: Ընդ որում, մանրածախ միջին՝ տարեկան գները ՀՀ ԱՎԾ տալիս է որպես չորս եռամսյակային գների միջին թվաբանականը, որը, մեր կարծիքով, կոռեկտ չէ: Պետք է հաշվի առնել նաև իրացված արտադրանքի ծավալը գոնե ըստ եռամսյակների և հաշվարկել միջին կշռված գները: Ընդունելով այս ելակետը, մենք կատարել ենք գների համապատասխան ճշտումներ և մեր հետագա հաշվարկներում օգտագործել ենք ճշտված գները:

ՀՀ ԱՎԾ և մեր կողմից ճշտված գների ՀՀ ամփոփ ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Բուսաբուծական հիմնական ապրանքային արտադրատեսակների 2003 - 2005 թթ. միջին հանրապետական տարեկան գները

Արտադրատեսակներ	Գյուղացիական (մեծածախ)	Շուկայական (մանրածախ)		ճշտվածը %-ով մեծածախի նկատմամբ
		ԱՎԾ	ճշտված	
Կարտոֆիլ	83	132	127	153
Բանջարեղեն	75	168	145	193
Բոստանային (ձմերուկ)	56	298	158	282
Պտուղ (խնձոր)	146	351	314	215
Խաղող	177	525	316	179

Երկու գների (մանրածախ և մեծածախ) առկայությունը առաջացնում է երկընտրանք՝ ո՞ր գներով է ճիշտ հաշվարկել արտադրության շահութաբերությունը: Մանրածախ շուկայական գների կիրառումը թվում է նախընտրելի, քանի որ շուկայում տարբեր ապրանքատեսակներ հարաբերակցվում են միմյանց հետ շուկայական գներով, սպառողը ապրանքը ձեռք է բերում այդ գներով, ի վերջո այդ գներով հաշվարկվում է ՀՆԱ-ն, պետական բյուջեն, բնակչության կենսամակարդակը և այլն: Սակայն, տվյալ դեպքում, մեզ հետաքրքրում է գյուղացիական տնտեսությունների էկոնոմիկան, արտադրության իրական արդյունավետությունը: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվարկը կատարել նաև այն գներով, որով գյուղացիական տնտեսությունները փաստորեն իրացնում են իրենց արտադրանքը: Սա անհրաժեշտ է այն առումով, որ մեծածախ ու մանրածախ գների միջև տարբերությունը միանգամայն էական է, ինչի մասին են վկայում աղյուսակ 1-ում բերված ցուցանիշները: Այսպես, կարտոֆիլի մանրածախ ճշտված գները գերազանցում են մեծածախին 53%-ով, բանջարեղենինը՝ 93, պտղինը՝ 115, խաղողինը՝ 79%-ով, իսկ ձմերուկինը՝ գրեթե երեք անգամ:

Մանրածախ և մեծածախ գների բերված տարբերությունից էլ բխում են արտադրության արդյունավետության (շահութաբերության) միանգամայն տարբեր մակարդակներ: Քննարկվող արտադրատեսակների շահութաբերության հաշվարկը բերված է աղյուսակ 2-ում:

[1] ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովվածություն և աղքատություն» 2007 թ., էջ 30 և 35:

Աղյուսակ 2

ՀՀ բուսաբուծական հիմնական ապրանքային արտադրատեսակների շահութաբերության հաշվարկ (2003 - 2005 թթ. միջին տվյալներով)

	Բերքատվությունը (գ/հա)	Նույնը 1000դր, հաշված		Մեկ ցենտ, ինքնարժեքը (1000 դրամ)	Շահույթը 1գ (1000 դրամ)		Շահութաբերությունը (%)	
		մեծածախ գներով	մանրածախ գներով		մեծածախ գներով	մանրածախ գներով	մեծածախ գներով	մանրածախ գներով
Կարտոֆիլ	161	1337	2046	7.4	0.9	5.3	12.9	72.0
Բանջարեղեն	267	2003	3872	6.5	1.0	8.0	15.3	123.0
Ձմերուկ	290	1624	4582	6.7	-1.1	9.1	-16.4	136.0
Խնձոր	64	936	2013	8.0	6.6	23.4	82.5	292.4
Խաղող	100	1770	3160	7.8	9.9	23.8	126.9	305.1

Աղյուսակի տվյալներից դժվար չէ նկատել, որ արտադրության շահութաբերության ցուցանիշները վճռականորեն տարբեր են կախված այն բանից, թե ինչ գներով են դրանք հաշվարկված: Գյուղացիական (մեծածախ) գներով հաշվարկելու դեպքում կարտոֆիլի և բանջարեղենի շահութաբերությունը կազմում է 13-15%, իսկ ձմերուկի արտադրությունը ստացվում է 16%-ով վնասաբեր:

Բավարար շահութաբերություն ապահովվում է պտուղների և, հատկապես, խաղողի արտադրության ոլորտում, համապատասխանաբեր 82 և 127%:

Պատկերը արմատապես փոխվում է, երբ հաշվարկը կատարվում է շուկայական գներով: Այս պարագայում շահութաբերությունը շեշտակիորեն բարձրանում է: Կարտոֆիլինը հասնում է 72%-ի, բանջարեղենինը՝ 123, ձմերուկինը՝ 136, իսկ խնձորինը ու խաղողինը՝ 292 և 305% - ի կամ բարձրանում է 2.5- 3.0 անգամ:

Հայտնի է, որ ցանկացած արտադրության նպատակը շահույթի ստացումն է: Իսկ սոցիալ-տնտեսական արդյունքը շահույթի բաշխումն է մարդկանց այն խմբերի միջև, որոնք մասնակցում են արտադրանքի ստացման ու իրացման գործընթացին: Տվյալ դեպքում, գյուղատնտեսական արտադրության պարագայում, մեր կածիքով, շահույթը բաշխվում է միանգամայն անարդարացի կերպով:

Այստեղ, ճարպկորեն օգտագործելով գների տարբերությունը, վերավաճառողների խումբը կարողանում է կորզել և յուրացնել շահույթի ոչնչով չարդարացված մեծ մասը: Այսպես, աղյուսակ 2-ում բերված ցուցանիշներից պարզվում է, որ, օրինակ, կարտոֆիլ արտադրող գյուղացին մեկ ցենտներ արտադրանքից ստանում է 0.9 հազ. դրամ շահույթ, իսկ վերավաճառողը՝ 4.4 հազ. դրամ (5.3-0.9), բանջարեղենի դեպքում համապատասխանաբար 1.0 և 7.0, պտղի՝ 6.6 և 16.8 և այլն: Շահույթի բաշխման համամասնությունները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Շահույթի բաշխումն արտադրողի և միջնորդի միջև (%)

	Արտադրողի բաժինը	Միջնորդի բաժինը	Դրանց հարաբերակցությունը
Կարտոֆիլ	17	83	1 :5.0
Բանջարեղեն	13	87	1 :6.7
Ձմերուկ	-	100	-
Խնձոր	28	72	1 :2.6
Խաղող	42	58	1 : 1.4

Վերը բերված տվյալների հիման վրա և հաշվի առնելով միջնորդի միջոցով իրացված արտադրանքի տեսակարար կշիռը հաշվարկվել է դրանց կողմից ստացված շահույթի չափը:

Աղյուսակ 4

Միջնորդների կողմից յուրացվող շահույթի մոտավոր հաշվարկ

Արտադրատեսակները	2003 - 2005 թթ. միջին-տարեկան արտադրանքը (հազ. տ)	Որից իրացվել է միջնորդի միջոցով*	Միջնորդի շահույթը 1տ հաշվով (հազ. դրամ)	Միջնորդի համախառն շահույթը (մլրդ. դրամ)
Կարտոֆիլ	549.4	300	44	13.2
Բանջարեղեն	611.3	500	70	35.0
Ձմերուկ	115.4	100	91	9.1
Խնձոր	176.8	120	168	20.2
Խաղող	136.1	70	189	9.7
Ընդամենը	x	X	X	87.2

* Մեր տարբերակով, ենթակա է ճշտման:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ միջնորդի միջին տարեկան շահութը բերված հինգ արտադրատեսակների գծով կազմում է շուրջ 87.2 մլրդ դրամ: Սրանից հանելով 20% վաճառահանման և այլ ծախսեր, կկազմի մոտավորապես 70-71 մլրդ դրամ՝ արտադրողի 23.2 մլրդ դիմաց:

Նշենք նաև, որ արտադրողը այդ շահույթը ստանում է գրեթե ամբողջ տարվա աշխատանքի արդյունքում, իսկ միջնորդը, լավագույն դեպքում, մեկ ամսվա, ինչը էլ ավելի է խորացնում անարդարության իրավիճակը:

Այնուհետև, ստանալով իր քրտինքով ստեղծված շահույթի չնչին մասը, արտադրող գյուղացին հարկային դաշտում մնում է միակ հարկվող սուբյեկտը: Միայն նա է վճարում հողի հարկը՝ որպես սեփականատեր:

Գյուղացիական տնտեսությունների արտադրանքի իրացման գործընթացների բարելավումը խիստ կարևոր է գյուղատնտեսական արտադրության արդյունավետության ընդհանուր բարձրացման գործում:

Արագածոտնի և Լոռու մարզերի բուսաբուծական հիմնական արտադրատեսակների ինքնարժեքի ցուցանիշների քննարկումը բերում է այն եզրակացության, որ դրանց իջեցման ամենահրատես ուղին դա ձեռքի ուժով կատարվող աշխատանքային գործընթացների մեքենայացումն է, քանի որ ձեռքով կատարվող աշխատանքները կազմում են աշխատանքային ամբողջ ծախսումների բացարձակ մեծամասնությունը և նյութադրամական ծախսումների ամենամեծ բաժինը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ձեռքով կատարվող աշխատանքային ծախսումների տեսակարար կշիռը (ՀՀ-ում)

Արտադրա-տեսակը	Աշխատանքային ծախսումները (1հա հաշվով)			Նյութադրամական ծախսումները (1հա հաշվով)		
	Ընդամենը, մարդ/օր	որից՝ ձեռքով		Ընդամենը, հազ.դրամ	որից՝ ձեռքով	
		մարդ/օր	տես.կշիռը (%)		հազ.դրամ	տես.կշիռը (%)
Աշնան ցորեն	17	10	59	123	25	20
Կարտոֆիլ	146	129	88	875	193	22
Բանջարեղեն	192	173	90	1023	433	42
Բազմամյա խոտ	17	14	82	71	35	49
Պտուղ	163	158	97	741	395	53
Խաղող	158	152	96	516	380	74

Աղյուսակի տվյալներից երևում է, որ աշխատանքային ընդհանուր ծախսումների կազմում ձեռքով կատարվող աշխատանքների տեսակարար կշիռը ըստ մշակաբույսերի տատանվում է 88-97%-ի սահմաններում: Բացառություն է կազմում հացահատիկը իր 59%-ով, ինչը շատ մասնագետների կարծիքով խիստ բարձր թիվ է: Բանն այն է, որ հացահատիկի պարագայում զգալի տեսակարար կշիռ ունեն ձեռքով կատարվող օժանդակ աշխատանքները, կապված բերքի ու այլ ապրանքների (սերմացու, պարարտանյութեր և այլն) բարձման - բեռնաթափման հետ: Որոշ տեսակարար կշիռ են կազմում նաև այն աշխատանքները (ցանք, պարարտացում), որոնց համար կան մեքենայացման միջոցներ, սակայն աշխատանքների ծավալների ու ցանքի տարածությունների փոքր չափերի պատճառով դրանց օգտագործումը թանկ է ու աննպատակահարմար: Դրա հետևանքով էլ այդ աշխատանքները, գերակշիռ մեծամասնությամբ, նույնպես կատարվում են ձեռքով:

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրության բարձրացման ուղիների ուսումնասիրությունները բերում են այն եզրակացության, որ դրանց բազմազանության մեջ, այնուհանդերձ, առանցքայինը հանդիսանում են արտադրության արդյունավետ չափերը: Միայն արտադրության բավարար չափերի պարագայում տեխնոլոգիական, տեխնիկական, կազմակերպական ու տնտեսական միջոցառումները, այն էլ ոչ առանձին - առանձին, այլ համալիր կարգով, կարող են ապահովել ակնկալվող արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկա դրությամբ ՀՀ - ում գործող գյուղացիական տնտեսություններում արտադրության գործընթացի, աշխատանքային ու նյութական ծախսումների, արտադրության ծավալների, արտադրանքի իրացման ուղղությունների, եկամուտների ու դրանց օգտագործման վերաբերյալ ուղղակի փաստացի հաշվառում չի վարվում: Դրա հետևանքով հնարավոր չէ ստույգ հաշվարկել արտադրության արդյունավետության ցուցանիշները և ստեղծել տնտեսական քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք: Գյուղատնտեսության ամբողջ տեղեկատվությունը ձևավորվում է գյուղապետարաններում՝ իրենց մոտավոր գնահատումների հիման վրա:

2. Գյուղացիական տնտեսություններում իրականացված ուղղակի հաշվառման հիման վրա կազմված մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիական քարտերի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ արտադրության գործընթացը տեղի է ունենում զգալի խախտումներով, ինչը հանգեցնում է արտադրության արդյունավետության անկմանը: Մասնավորապես, ցանքը

կատարվում է ցածրորակ սերմանյութով, չեն պահպանվում պարարտացման ու բույսերի պաշտպանության միջոցառումների համակարգը, աշխատանքները կատարվում են գերազանցապես ձեռքով ու ժամկետների խախտումներով:

3. Այնուհանդերձ, բուսաբուծական մթերքների արտադրությունը գյուղացիական տնտեսություններում շահութաբեր է, հատկապես, երբ շահութաբերությունը հաշվարկվում է շուկայական մանրածախ գներով: Այս պարագայում շահութաբերությունը 2.5-3.0 անգամ ավելի բարձր է, քան մեծածախ գներով արտադրանքը իրացնելու դեպքում:

Օգտագործելով գների տարբերության հանգամանքը, գյուղացիական տնտեսություններում առաջացած շահույթի մեծ մասը յուրացվում է միջնորդ - վերավաճառողների կողմից: Հաշվարկները ցույց են տալիս, որ վերջիններս յուրացնում են կարտոֆիլի արտադրությունից առաջացած շահույթի 83, բանջարեղենի՝ 87, ձմերուկի՝ 100, խնձորի՝ 72 և խաղողի 58%-ը:

Հաշվի առնելով նաև վերավաճառողների ծախսերը, նրանց տարեկան շահույթը կարտոֆիլի, բանջարեղենի, ձմերուկի, պտղի և խաղողի իրացումից կազմում է շուրջ 70-71 մլրդ դրամ, գյուղացիական տնտեսությունների 23 մլրդ դիմաց:

4. Գյուղացիական տնտեսություններում արտադրության արդյունավետության բարձրացման ամենաարմատական գործոնը դա արտադրության արդյունավետ չափերին հասնելն է: Դրանց ներկայումս գոյություն ունեցող չափերի պայմաններում հնարավոր չէ արդյունավետությամբ օգտագործել մեքենայացման, տրանսպորտային ու տեխնիկական այլ միջոցներ, ոռոգման համակարգ ու արտադրական ենթակառուցվածքները: Հնարավոր չէ կիրառել արտադրության վարման որևէ հիմնավորված համակարգ, իսկ տեխնոլոգիական առանձին միջոցառումների կիրառումը, պահանջելով մեծ ծախսեր, կարող է տալ աննշան արդյունք:

5. Գյուղացիական տնտեսությունների արդյունավետության կարևոր գործոն է արտադրանքի իրացման կազմակերպումը: Արտադրանքի իրացումը ներկայումս մեծ մասամբ իրականացվում է վերավաճառողների կողմից, որոնք յուրացնում են գյուղացու աշխատանքով ստեղծված շահույթի մեծ մասը: Խնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

- նպաստել առևտրային, սպառողական, վերամշակող և, իհարկե, արտադրական կոոպերացիայի զարգացմանը,
- Երևանի և հանրապետության մյուս քաղաքների շուկաներում, բանուկ թաղամասերում, խոշոր հիմնարկ - ձեռնարկություններում հնարավորություն տալ ստեղծելու գյուղական համայնքների ֆիրմային խանութ-կրպակներ,
- կոոպերացիայի, հողի շուկայի ակտիվացման և այլ միջոցներով նպաստել խոշոր ապրանքային տնտեսությունների կազմակերպմանը, որոնք կկարողանան ունենալ իրենց սեփական խանութ-կրպակները,
- սահմանել շահագրգռիչ միջոցներ կոոպերատիվների համար: Հնարավորինս արագացնել «Գյուղատնտեսության կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունումը.

Գյուղատնտեսության կոոպերացիան ու արտադրության խոշորացումը անհրաժեշտ են ոչ միայն բուն արտադրության գործընթացը արդյունավետ կազմակերպելու, այլև արտադրանքի իրացումը շահավետ կազմակերպելու համար: